«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 90 05 26
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

24.08.2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Արթուր Նալբանդյանին
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Նալբանդյան*,
«Հետքը» հոդված է պատրաստում դպրոցաշինության ծրագրերի վերաբերյալ, ուստի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. 2006-2014թթ. դպրոցաշինական ծրագրով Լոռու մարզում քանի՞ դպրոց է վերանորոգվել կամ կառուցվել, ո՞ր համայնքներում:
2. Յուրաքանչյուր դպրոցի համար որքա՞ն գումար է նախատեսվել, ովքե՞ր են եղել կապալառու կազմակերպությունները (տեղեկատվությունը տրամադրել ըստ դպրոցի, գումարի չափի և կապալառու կազմակերպության):
3. Կապալառու կազմակերպությունների հետ ի՞նչ եղանակով են կնքվել պայմանագրերը (տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ ընկերության և դպրոցի): Տրամադրել բանակցային ընթացակարգին վերաբերող արձանագրությունների և մրցույթ հայտարարելու մասին փաստաթղթերի պատճենները:
4. Կա՞ն ծրագրում ընդգրկված դպրոցներ, որոնց շինաշխատանքները չեն ավարտվել կամ՝ թերություններով են կատարվել: Եթե այո, ապա ո՞ր դպրոցներն են դրանք, և ովքեր են եղել կապալառուները, ի՞նչ քայլեր են ձեռնարկվել թերությունները վերացնելու ուղղությամբ:
5. 2015թ. մարզում քանի՞ դպրոց է վերանորոգվել կամ կառուցվել, ո՞ր համայնքներում, ի՞նչ գումարի շրջանակում: Ովքե՞ր են եղել կապալառու ընկերությունները (տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ ընկերությունների, դպրոցի և պայմանագրով նախատեսված գումարի չափի):
6. Մարզում քանի՞ դպրոց վերանորոգման կարիք ունի և որոնք են այդ դպրոցները:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան